

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**08 հունիսի 2021թ.
ք. Երևան**

N 128-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՌՈԲԵՐՏ ՔՈԶԱՐՅԱՆԻ
«ԿՅԱՆՔ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔԻ ՊԱՏԿԵՐՈՎ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԸ
ԿԱՌՈՒՅԵԼԻՍ» ԳՐԱՌՄԱՄԲ ՊԱՍՏԱՌԸ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ
ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՍՈՑԻԱՑՎՈՂ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 21-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության վերջին նախադասության համաձայն. «Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով քարոզչական պաստառը կարող է փակցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես բաշխված արտաքին գովազդային վահանակում»:

Նույն հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն.

«Նախընտրական քարոզչության անցկացման ժամանակահատվածում վերացման են ենթակա նաև կենտրոնական կամ տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչված՝ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով պաստառները, տպագիր և այլ նյութերը այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, և որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները»:

Հիմք ընդունելով նշված իրավանորմերի պահանջները և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ իրականացրած վարչական վարույթի շրջանակներում կատարած շրջայցերի և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմից ստացված փաստաթղթերի ուսումնասիրմամբ պարզել է, որ առկա են մի շարք արտաքին գովազդային վահանակներ, որոնց վրա տեղադրված են 5 քառակուսի մետրը գերազանցող Ռոբերտ Քոչարյանի հեղինակած «Կյանք և ազատություն» գրքի պատկերը և «Հայաստանը կառուցելիս» գրառումը պարունակող պաստառներ, որոնց էսքիզը ներկայացվել է «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ-ի կողմից որպես «Հավելված թիվ 113/21», «Հավելված թիվ 67/21», ինչպես նաև Ադվերսիթի ՍՊԸ-ի կողմից և հաստատվել (Երևանի քաղաքապետի 25.05.2021թ. N01/52-630974 գրությամբ ներկայացված ցանկի 28-րդ և 38-րդ կետեր՝ կից էսքիզներով):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքացի Ռոբերտ Քոչարյանը Հայաստան դաշինքի ընտրական ցուցակով գրանցված է որպես Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների պատգամավորի թեկնածու, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ նրա հեղինակած գրքի պատկերով պաստառներն իրենց բովանդակությամբ ասոցացվում են նախընտրական քարոզչության հետ հետևյալ պատճառաբանությամբ.

Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածը կանոնակարգում է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի օգտագործման կարգը, որի 6-րդ մասը սահմանում է. «Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունները 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով վահանակներն ընտրություններին մասնակցող կուսակցություններին տրամադրելու համար ընտրությունները նշանակվելուց հետո՝ 21-օրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ներկայացնում են տեղեկատվություն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին տրամադրվող վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ: Տեղեկությունները տրամադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Այն վահանակները, որոնք բացակայում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ներկայացված ցանկում, հետագայում չեն կարող տրամադրվել ընտրություններին մասնակցող կուսակցություններին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այս տեղեկությունները տեղադրում է հանձնաժողովի համացանցային կայքում: Ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման փաստաթղթերը ներկայացնելու համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում ընտրություններին մասնակցող կուսակցությունները Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ներկայացնում են հայտեր՝ այդ գովազդային վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով: Այս տեղեկությունների հիման վրա արտաքին գովազդային վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու իրավունքն ընտրություններին մասնակցող կուսակցությունների միջև բաշխվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման հիման վրա ընտրություններին մասնակցող կուսակցությունն արտաքին գովազդային վահանակը տնօրինող կազմակերպության հետ կնքում է պայմանագիր՝ քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութ փակցնելու համար: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից պայմանագիր չկնքվելու դեպքում գովազդային վահանակը տնօրինողն ազատ է կնքելու այլ պայմանագիր՝ այդ վահանակն այլ նպատակներով օգտագործելու: Ազգային ժողովի և

Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով քարոզչական պաստառը կարող է փակցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես բաշխված արտաքին գովազդային վահանակում:

Փակցված քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը քվեարկության օրը և դրա նախորդ օրը կարող են մնալ իրենց տեղերում:»:

Նախընտրական քարոզչության վերը նշված իրավական կանոնակարգումը նպատակ է հետապնդում ապահովելու հավասար հնարավորություններ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին: Հավասար հնարավորություններ ապահովելու նկատառումներից ելնելով՝ օրենսդիրը պահանջում է, որ Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպություններից ստացված տեղեկությունների հիման վրա բաշխի այդ վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու իրավունքն ընտրություններին մասնակցող կուսակցությունների միջև: Ընդ որում, նշված իրավական կանոնակարգման շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը զրկված է նշված բաշխմանն ուղղակիորեն միջամտելու հնարավորությունից, քանի որ բաշխումը պետք է իրականացնի բացառապես վիճակահանությամբ:

Պրակտիկան վկայում է, որ ընտրություններին մասնակցող կուսակցությունները, թեկնածուները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից չբաշխված վահանակներում փակցնում են պաստառներ, որոնք թեև դասական առումով նախընտրական քարոզչական պաստառ կամ նյութ չեն հանդիսանում (օրինակ՝ չեն պարունակում կուսակցության անվանումը, չեն ներառում ուղղակի կոչ՝ քվեարկելու կամ չքվեարկելու այս կամ այն կուսակցության կամ թեկնածուի օգտին), կամ չեն մատուցվում որպես քարոզչություն, սակայն հետապնդում են այն նույն նպատակները, ինչ նախընտրական քարոզչությունը, կամ ունակ են առաջացնելու կամ կարող են առաջացնել կամ առաջացնում են այնպիսի ընկալում, կամ մարդու վրա թողնում են կամ կարող են թողնել այնպիսի տպավորություն, ինչպիսին նախընտրական քարոզչությունը: Ակնհայտ է, որ տարբեր սուբյեկտներ պատկերները, երևույթները տարբեր կերպ կարող են ասոցացնել միմյանց հետ: Օրենսդիրը գտել է, որ վերը նշվածի կապակցությամբ գնահատական տալու լիազորությունը կենտրոնական կամ տարածքային ընտրական հանձնաժողովին է՝ որպես ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի, և վերջիններս այդ գնահատումն իրականացնում են չբաշխված վահանակների վրա փակցված պաստառները և այլ նյութերը նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչելու միջոցով, և միայն իրավասու ընտրական հանձնաժողովի կողմից տրված գնահատականն է առաջացնում իրավական հետևանքներ:

Հարկ է նկատել, որ «ասոցացումը» օրինաչափորեն ծագող կապն է առանձին առարկաների, երևույթների, փաստերի միջև, որն արտացոլված է մարդու գիտակցության մեջ և ամրապնդված է նրա հիշողության մեջ:

Պատկերները միմիանց հետ ասոցացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք միավորվում են մարդու ընկալման մեջ:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ երկու պատկերների, առարկաների, երևույթների ասոցացումն առաջանում է անձի սուբյեկտիվ ընկալումների արդյունքում:

Ընտրական օրենսգիրքը կիրառում է «ասոցացում» եզրույթը երկու իրավահարաբերությունների նկատմամբ: Այսպես, Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են **նմանեցվել (ասոցացվել)** ընտրություններին մասնակցող կուսակցությունների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները կամ նրանց առաջադրած թեկնածուները: »:

Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի դրույթների խախտմամբ փակցված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը հանում է համայնքի ղեկավարը, անհրաժեշտության դեպքում՝ ոստիկանության աջակցությամբ: Սույն գործառույթը համայնքի ղեկավարի համար պատվիրակված լիազորություն է:

Նախընտրական քարոզչության անցկացման ժամանակահատվածում վերացման են ենթակա նաև կենտրոնական կամ տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից **նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչված՝ 5** քառակուսի մետրը գերազանցող մակերեսով պաստառները, տպագիր և այլ նյութերը այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, և որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները: Մինչև 5 քառակուսի մետր մակերեսով՝ նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչված պաստառները, տպագիր և այլ նյութերը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ 5 քառակուսի մետրը գերազանցող՝ նախընտրական քարոզչության հետ ասոցացվող համարված պաստառները, տպագիր և այլ նյութերը ենթակա են վերացման, եթե նշված պաստառների, տպագիր և այլ նյութերի ծախսերը սահմանված կարգով չեն ներառվում նախընտրական հիմնադրամում:»:

Ընտրական օրենսգրքով «ասոցացում» եզրույթի հասկացությունը տրված չէ: Բացակայում են նաև այս կամ այն պաստառը նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչելու հիմքերը, չափանիշները, ինչը բնական է, քանի որ ասոցացումն

ինքնին բացառապես անձնական ընկալման տիրույթում է: Վերոգրյալի հաշվառմամբ՝ օրենսդիրը սահմանել է միայն պաստառը նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչող սուբյեկտին, այն է՝ կենտրոնական կամ տարածքային ընտրական հանձնաժողովը: Օրենսդրի գնահատմամբ, հենց այս սուբյեկտներն են, որ կարող են իրենց սուբյեկտիվ ընկալման տիրույթում գնահատել, արդյոք այս կամ այն պաստառը կամ տպագիր այլ նյութն ասոցացվում է նախընտրական քարոզչության հետ, թե՛ ոչ:

Ուշագրավ է, որ իրավակարգավորումը վերաբերում է ոչ թե ընդհանրապես պաստառի հեռացմանը, այլ դրա հեռացմանը խիստ որոշակի ժամանակահատվածում՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում: Նպատակը մեկն է, որպեսզի սահմանափակ ռեսուրսի օգտագործման առումով չառաջանա անհավասարություն քարոզչությանը մասնակցող սուբյեկտների միջև: Այսինքն՝ քարոզչության ժամանակահատվածի ավարտից հետո նման պաստառները կարող են նորից փակցվել նույն վահանակներին: Եվ նման մոտեցման հիմքը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հավասար հնարավորությունների ապահովումն է:

Ընտրական օրենսգիրքը նախընտրական քարոզչության իրականացման ամենատարածված եղանակ է ճանաչում. զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչություն իրականացնելը, նախընտրական ժողովներ և ընտրողների հետ հանդիպումներ կազմակերպելը, քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի տարածումը:

Քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի տարածման եղանակով քարոզչություն իրականացնելիս նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքների, մասնավորապես՝ հավասար և ոչ խտրական պայմանների ապահովման նպատակով՝ ասոցացվող ճանաչելու ինստիտուտի կիրառմամբ հնարավոր է ապահովել ոչ խտրական պայմաններ ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար:

Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության՝ սույն օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված կարգի պահպանումը: Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից այդ կարգի խախտման դեպքում թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ դրանք կանխելու նպատակով կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ՝ տալով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ, որը չի կարող գերազանցել 3 օրը: Թեկնածուն, ընտրություններին մասնակցող կուսակցությունը պարտավոր են որոշմամբ նշված ժամկետում վերացնել խախտումը (խախտման հետևանքները) և այդ մասին գրավոր տեղեկացնել ընտրական հանձնաժողովին»::

Նշված լիազորության արդյունավետ իրացումն ապահովելու նպատակով և հաշվի առնելով նախընտրական քարոզչության սեղմ ժամկետները (12 օր)՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի մայիսի 14-ին տարածել է հաղորդագրություն հետևյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչությունը մեկնարկելու է 2021 թվականի հունիսի 7-ից, սակայն հանրապետության մի շարք քաղաքներում և միջպետական ավտոճանապարհներին տեղադրված արտաքին գովազդային վահանակներում տեղադրվել են 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով քարոզչական կամ քաղաքական գովազդ իրականացնող պաստառներ:

ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ընտրությունների ժամանակ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով քարոզչական պաստառներ կարող են տեղադրվել միայն այն վահանակների վրա, որոնք վահանակները տնօրինող կազմակերպությունների կողմից նախապես տրամադրվել են ԿԸՀ-ին և ԿԸՀ-ն բաշխել է ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի միջև: 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով քարոզչական պաստառ կարող է փակցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես բաշխված արտաքին գովազդային վահանակում:

Նախընտրական քարոզչության անցկացման ժամանակահատվածում 5 քառակուսի մետրը գերազանցող այն քարոզչական պաստառները, ինչպես նաև նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչված պաստառները, որոնք փակցված կլինեն ԿԸՀ-ի կողմից չհատկացված վահանակներում՝ անկախ այն հանգամանքից, թե ում կողմից են դրանք փակցվել, ենթակա են վերացման:

Մինչև 5 քառակուսի մետր մակերեսով՝ նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչված պաստառները, տպագիր և այլ նյութերը ևս ենթակա են վերացման, եթե նշված պաստառների, տպագիր և այլ նյութերի ծախսերը սահմանված կարգով չեն ներառվում նախընտրական հիմնադրամում:

Խախտմամբ փակցված քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը հանում է համայնքի ղեկավարը, անհրաժեշտության դեպքում՝ ոստիկանության աջակցությամբ:»:

Սույն հաղորդագրությունը ղեկավարված է եղել նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում:

2021 թվականի մայիսի 31-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցելու մասին կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ներկայացված դիմումները՝ կից փաստաթղթերով, գրանցել է համապատասխան կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները: Գրանցված սուբյեկտների թվում է նաև Հայաստան դաշինքը, որի ընտրական ցուցակով պատգամավորի թեկնածու է գրանցվել Ռոբերտ Սեդրակի Քոչարյանը:

Հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ մասերը, 51-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սույն վարչական վարույթի շրջանակներում որպես փաստական հիմք դիտարկում է հետևյալ հանգամանքները.

- սեփական նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի շրջանակներում կատարած շրջայցերի և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմից ստացված փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքները, որոնցով փաստվում է, որ Երևան քաղաքում և մի շարք մարզերում առկա են մի շարք արտաքին գովազդային վահանակներ, որոնց վրա տեղադրված են 5 քառակուսի մետրը գերազանցող Ռոբերտ Քոչարյանի հեղինակած «Կյանք և ազատություն» գրքի պատկերը և «Հայաստանը կառուցելիս» գրառումը պարունակող պաստառներ,

- Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների մասնակցելու նխատակով 2021 թվականի մայիսի 31-ի N 57-Ա որոշմամբ գրանցվել է Հայաստան դաշինքի ընտրական ցուցակը, որում 1-ին հերթական համարում ընդգրկված է պատգամավորի թեկնածու Ռոբերտ Քոչարյանը:

Նշված փաստական հանգամանքերի հաշվառմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների ընկալունականության շրջանակներում 5 քառակուսի մետրը գերազանցող Ռոբերտ Քոչարյանի հեղինակած «Կյանք և ազատություն» գրքի պատկերը և «Հայաստանը կառուցելիս» գրառումը պարունակող պաստառները Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գնահատում է (որակում է) Հայաստան դաշինքի նախընտրական քարոզչության հետ ասոցացվող:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 9-րդ մասի, 51-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Քաղաքացի Ռոբերտ Քոչարյանի «Կյանք և ազատություն» գրքի պատկերը և «Հայաստանը կառուցելիս» գրառումը պարունակող պաստառները ճանաչել Հայաստան դաշինքի նախընտրական քարոզչության հետ ասոցացվող:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. Մուկուչյան